

վտանգաւոր չի լինի, որ ընկճէ ոգւոյ աշխուժութիւնը և մաշէ ուղեղի եւանդը:

Վերջացնելով մեր խօսքը, մենք կարծում ենք, թէ մեր մէջ շատ կը գտնուին այնպիսի ուսուցիչներ, որոնք ջանալով իրանց պաշտօնը սրբութեամբ կատարելու՝ անկեղծութեամբ երեւակայում են, իբր թէ քաջ յիշատակի փորձել են և միշտ անօգուտ, ուստի անհրաժեշտ են համարում թէթի գործադրութիւնը: Մեր ցանկութիւնն էր համոզել նոցա, թէ խնդիրը շատ աւելի բարդ է, քան ինչպէս որ նոքա փորձում են լուծել: Պատժի խնդիրը ամբողջ ճանկավարժութեան և ուրեմն հափեթանս-Յեան մեծ մասին է վերաբերում: Հասկանալի է, որ այսպէս ընդարձակ յարակցութիւնները՝ մեր յօդուածում կարող էինք պարզել լոկ միայն ակնարկներով: Արդ ով որ կը կամենայ աւելի մանրամասնութիւններ ուսումնասիրել, մենք կառաջարկենք նորան ամենալաւ նպատ, որ և մեզ առաջնորդեց, այն է Բէնի հափեթանս-Յեանն ու ճանկավարժութիւնը:

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆԻՔ.

(Շարունակելի).

Վանքի շուրջ տեղի ընտրութիւնը, ամեն մի հոգս, պահպանութիւն և պաշտպանութիւն լիովին ընկնում է ուխտաւորների վերայ: Վանքը ոչինչ բանով նպաստաւոր չէ նորանց: Չկայ ոչ անձն, որ հոգատար լինէր ուխտաւորների վերայ, իջնելու տեղ ցոյց տար, վարձու վրան ճարեր, այս և այն անհրաժեշտ կարեաց հասու լինէր: Միով բանիւ ուխտաւորը լիովին օտարութեան մէջ է զգում իւրեան: Իւրաքանչիւր ուխտի օրի այցելուների թիւը հասնում է մինչև վեց հազար հոգի:

Գարալագեազի թուրք և քիւրդ տարրը անհաղորդ չի մընում յիշեալ հանդիսին: Նոքա մեծամեծ խմբերով և առանձնակի խառնվում են հայ ուխտաւորների մէջ և գիշեր ու ցե-

րէկ անդադար չըջում են, աչք են ձգում յորս կողմի վերայ և վայ նորան՝ ով իւր որ և է իրեղէնը կամ ձին, կամ ապրանքը անապահով տեղ է դրել: Այդ աւազակներին չափազանց նպաստում են գիշերային խաւարն և լայնատարած քարակոյտներն, ուր ամէն անկիւն, դար և փոս յայտնի են նորանց իբրև ընկիւնների ու անյայտ օտար ուխտաւորներին:

Ահա այս նպատակի համար են հաւաքուում Սուրբ խաչի շուրջը տեղական թուրքերն և ոչ թէ նորա համար որ Զալալեանի գիրքը ասում է «կայ ուխտս այս ի մեծի պատուի ոչ միայն ի քրիստոնէից այլ և ի տաճկաց»: Դեռ ևս ականջիս մէջ թնդում են մի ծեր և աղքատ կնոջ արտասուախառն լացը և կոծը: Այդ թշուառը վարձու ձիով եկած էր Նոր Բայազետի գաւառից և հէնց ուխտին հրաժարական տալու օրը այդ կրօնական ջերմեռանդութեան զոհ՝ ձին մասնել էր գիշերը գողերին վանքի տակ: Երեւակայելով որ պէտք է մնար ոտով, յետ ընկնէր ընկերներից, պատասխան պէտք է տար ձիատիրոջ, յուսահատ կիւր լուսաբացին, կոյտ քարերի վերայ չոգած իմ վրանի մօտ, արտասուքը աչքերին, ձեռքերը տարածած, անօգնական մնալով, աղետալի ձայնով օգնութիւն էր հայցում Սուրբ խաչ վանքից.....: Այսպիսի դէպքեր հազուադէպ չեն:

Շարուր—Դարալագեռագ գաւառի պոլիցիական կառավարութիւնը նշանակում է մի աստիճանաւոր կարգ և կանոն պահելու ուխտաւորների մէջ Սուրբ խաչի տօնին, բայց ահագին ամբօխի մէջ անխուսափելի են կռիւր, ծեծը, գողութիւնը, սրով վէրք հասցնելն և այլն:

Ուխտաւորների դաշն և դարձը կառարուում է գլխաւորապէս երեք ուղղութեամբ: Երեւանի, Էջմիածնի և Սուրմալուի գաւառացիների համար—արեւմտեան կողմից: Նոր Բայազետցւոց համար—հիւսիսային. Նախիջևանի, Օրդուբադի, Շուշուայ և Զանգեզուրի կողմերից եկողների համար—արեւելեան կողմից: Սուրբ խաչի տօնը սովորաբար լինում է շաբաթ: Այդ պատճառով ուխտաւորների տուտը երեւում էր դեռ չորեքշաբթի և հինգշաբթի, բայց առաւել իսուան բազմութիւնը գալիս է ուրբաթ օրը, որպէս զի հեռեւեալ օրը, շաբաթ, կազմ

և զարդարուած լինին վանք մտնելու, թէև վանք մտնելը կատարուում է ամենայն օր և իւրաքանչիւր ըոպէ:

Շատ դիւթիչ տեսարան է պատկերանում մանաւանդ ուրբաթ օրն, երբ ամեն հասակի և սեռի ուխտաւորներ գոյնզգոյն զարդարուն զգեստներով, ձիերի, էշերի, այլ անասունների և մատաղացու գառների հետ խառն, իրար յետևից երկար սև ձիգ շղթայի նման շրջապատում են ամեն կողմից դէպի վանքը: Հարաւային ճանապարհով, Մալիշկայի կողմից եկողները, տեղի ստորութեան պատճառով, դեռ երկար ժամանակ չեն կարողանում տեսնել վանքի շինութիւնը, բայց մօտ 200 քայլ մնացած, ճանապարհի կողքում ցցուած մի քարի մօտից՝ իւր գմբեթը յանկարծ ցոյց է տալի Սուրբ խաչ վանքը:

Հենց այդ տեղ, այդ քարի տակ, տեսնենք, քանի ջերմեռանդ կրօնասէրներ միմեանց վերայ բարդուելով ընկնում են գետնի վերայ և երեսներին խաչ քաշելով համբուրում են սառը հողը, Տեսնէիք թէ քանի ջերմաջերմ հայցումներ, անվերջ պաղատանքներ, հրաբորոք խօսքեր դուրս են թռչում գէպի Սուրբ խաչը այդ հաւատով լի ժողովրդի եռանդոս սրտերից:

Սև դուք կարծումէք թէ այդ զգացմանց ժամանակ մի հոգևոր անձն յառաջ է գալի ուխտաւորներին ընդունելու, նորտնց կրօնական եռանդը առաւել շարժելու . . . քաւ լիցի դորա փոխարէն, հէնց յիշեալ քարի տակ և նորանից ցած, ճանապարհի եզրում շարուած՝ նուազում են աշուղներն և օդը թնդացնում էին զուռնաչիները, կամ ձեռքերը մեկնում են կոյր ալքատները, որպէս զի բարի ուխտաւորները ձգեն մի քանի կոպէկ նորտնց առաջ սիւռած թաշկինակի վերայ:

Վանքի տակ ամենաազմկալի, ամենակենդանի ժամանակն ուրբաթ կէս օրից յետոյ է: Հարիւրաւոր վրաններ շարուած են ահագին տարածութեան վերայ, հարիւրաւոր անդերում թընդում է զուռնայի ձայնը, մի քանի այլ տեղերում լսուում է աշուղների սազը: Հազարաւոր կրակներ և ճրագներ են փայլում: Երկսեռի երիտասարդների բազմաթիւ խմբեր պար են բռնել ամենքն իւրեանց շրջանում և ազգային ժողովրդական երգեր են երգում: Ի՞նչ աղմուկ, ի՞նչ թնդոց, ի՞նչ տեսակ

տեսակ հայ բարբառ, ի՞նչ գոյն զգոյն զգեստներ, ի՞նչ շար-
 ժում, ի՞նչ զբօսումն, ի՞նչ երթևեկութիւն, ի՞նչ իրարան-
 ցում, ի՞նչ խոճում, ի՞նչ կռիւ, ի՞նչ աղմուկ, ի՞նչ ձիերի
 խրխնջոց, եզների բառաչոց, ոչխարների մայումն, շների հա-
 ջոց և այլն:

Աւելացրէք սորանց վերայ և լարախաղին, որ պարում է լա-
 րի վերայ Քիւլթափայի մասունքի օգնութիւնը կանչելով: Մի-
 ու վանիւ այդ անվրդով, ամայի, քարքարուտ դաշտը՝ որ երկու
 երեք օր առաջ մի տեսակ մեռելութիւն էր արտայայտում,
 այսօր երևում է մեզ հազար տեսակ պատկերներով և տեսա-
 րաններով՝ որ գրիչն անգամ դժուարանում է նկարագրելու:

Մանրավաճառները վանքի փոքրիկ խանութներում և բացօ-
 թեայ տեղերում չեն զլանում դասաւորել ուխտաւորներին
 կարևոր նիւթեղէններ, այն է՝ չոր միրգ, պատրաստի հանգերձ,
 զարդի իրեղէն, զէնքեր: Հաղող, թարմ մրգեղէն և այլն:

Վերը յիշեցի թէ երթևեկութիւնը եկեղեցում կատարուում
 է ամենայն րոպէ, բայց շաբաթ, իսկ տօնի օրը, այնքան խուռն
 բազմութիւն է մտնում վանքի պարիսպը և եկեղեցու մէջ, որ
 փոքր ի շատէ ազատ շարժումն անկարելի է լինում և այդ մի-
 ջոցին կարգը վերանում է: Եկեղեցու մէջ աղմուկ, աղաղակ,
 բարձրաձայն խօսակցութիւն, մանկանց անվերջ լաց սովորական
 երոյնթներ են:

Այդ օրը երկու երեք քահանայք նստած սեղանի վերայ
 նուէրներ են ընդունում ուխտաւոր ժողովրդից: Բայց ամե-
 նաառատ տուրքը լինում է հարաւային խորանում, ուր ամ-
 փոփած է խաչափայտի մասնիկը: Այդ տեղ նուիրաց վերահըս-
 կողն և ընդունողն էջմիածնի կողմից ուղարկած վարդապետն
 է: Որովհետև խորան մտնող ելնողների կողմից մեծ ճնշում և
 առաջկտրուկ է լինում և հետևաբար աղմուկ և անկարգու-
 թիւն, ուստի ուխտաւորների մէջ կարգը վերականգնելու հա-
 մար ճիպոտներով անխնայ հարուածներ են գործ դնում ուխ-
 տաւորների գլխին այն պատահական տղամարդիկ, որոնք իրեւ
 բարեկամ էջմիածնից ուղարկուած վարդապետին՝ եկել են
 օգնելու նորան . . . : Ահա մի տգեղ և զզուելի երևոյթ, որ

անվայել է Աստուծոյ տաճարում.

Շարաթ և նորա նախընթաց օրը մորթում են մատաղներն մորթը տալիս են կապալառու ժողովարարներին. միսն ուտում և բաժանում են և այնուհետև ոմանք պատրաստուում են շարաթ օր երեկոյեան դէմ հրաժեշտ տալու վանքին, իսկ մր-նագեալները ճանապարհ են ընկնում կիւրակէ, այնպէս որ այդ օրը, կէս օրից յետոյ. Սուրբ խաչի շրջակայքը նորից ըն-գուհնում է իւր սովորական լուսթիւնը:

Այս է ահա Սուրբ խաչ վանքի ուխտազնացութեան համա-ռօտ նկարագիրը: Աւելացրէք սորա վերայ որ ուխտաւորներից շատերը վերագառնում են ոիրտը կոտրած, ըստ որում գողու-թեան են զոհում իրեղէն, եզ, ձի, էջ և այլն և այնքան միջոց և ժամանակ չունին յետևից ընկնելու: Կամ թէ պօլիցիական աստիճանաւորը վէրք հասցնելու կամ գուցէ մարդասպանու-թեան առաջն առնելու նպատակով շատ ուխտաւորներից ժո-ղովում է իւր վրանը գէնքեր, դաշոյներ առանց նշանակելու թէ որն ումն է և վերագարձնելու ժամանակ տանող տանոցի է լինում: շատերը զրկւում են իւրեանց գէնքերից, շատերն էլ գէնրի տէր են դառնում...:

Այժմ անցնենք Էջմիածնի գանձարանին հասանելի նուիրա-տուութեանը: Ուխտի օրի եկամուտ Էջմիածնի գանձարանին յատկացնելու կարգադրութիւնը շատ վաղուց է: Գուճարի քանակութիւնը որոշելու համար ես կրերեմ այս տեղ այն տեղեկութիւններն, որ քաղել եմ Նախիջևանի հոգևոր կա-ռավարութեան պաշտօնական գործերից: 1856 թուականին Էջմիածնական մուտքը ժողովելու համար նշանակուել են եր-կու անձինք: մինը Էջմիածնի և միւսը Նախիջևանի հոգևոր կառավարութեան կողմից, որոնց ձեռքով հաւաքուել է աջա-համբոյր 320 ռուբլի 86 կոպէկ, մոմավաճառութիւնից 23 ռ. 50 կ: մատաղի կաշէպին 4 ռ. 50 կ. ընդամենը 338 ռուբլի 86 կոպ. իսկ ճանապարհաճախս 40 ռ. 70 կոպէկ:

1857 թուին գործը յանձնուել է միմիայն բարեկարգ քահա-նաներին, որոնք յանձնել են Նախիջևանի հոգևոր կառավա-րութեանը 713 ռուբլի 12 կոպէկ. իսկ ճանապարհաճախս եղել

է 19 ռուբլի 90 կոպէկ: 1858 թուականին մուտքն եղել է 826 ռ. 20 կոպէկ. և ծախս 25 ռուբ. 60. կոպ: Այդ թուականին Սրբազան Սինոդը պատուիրել է հոգևոր կառավարութեանն, որ սա առանց առանձին թոյլտուութեան այլ և ոչորի չուղարկի Արգեազու Սուրբ խաչ՝ եկամտի համար: 1861 թուականին, Սինոդի կարգադրութեամբ, գնացել է Արգեազ Նախիջևանի հոգևոր կառավարութիւնն, ամբողջ կազմութեամբ և այդ տարու մուտքն եղել է 564 ռ. 80 կ. իսկ ծախս 34 ռ. 20 կ:

Հետեւեալ 1862 թուականի մուտքը մնում է սնյայտ, ըստ որում այդ թուականից՝ Մողնու, Նորագաւթի և Նորքի սուրբ Առուածածին եկեղեցու եկամուտների հետ, Սինոդի կարգադրութեամբ և Արգեազու Սուրբ խաչի եկամուտը յատկացուում է ժամանակաւորապէս Երևանի Թեմական դպրանոցին, որի համար Նախիջևանի հոգևոր կառավարութեան կողմից հրամայուում է Սուրբ խաչ վանքի այդ թուականի վերատեսուչ — կապալառու Տէր Առաքել Տէր Աստուածատրեանցին հաշիւ տալ անմիջապէս յիշեալ դպրանոցի հոգաբարձութեանը:

Իմ ճանապարհորդութեանց միջոցին վերոյիշեալ կարգը փոխուել էր, Սրբազան Սինոդն ինքն իւր կողմից ուղարկուում էր մի կամ երկու վարդապետ, Սոքա Սուրբ խաչ հասնելուն պէս կառավարութեան ղեկը առնում էին իւրեանց ձեռքն: Վարդապետը նստում էր հարաւային խորանում, իսկ տեղական երեք—չորս քահանայք նստում էին սեղանի վերայ: Սոքա ժողովում էին ամեն տեսակ տուրքեր և նուէրներ, և այլք ծախում էին մոմ և հսկում էին եկեղեցու մէջ կարգապահութեան վերայ:

Վառելափայտի մեծ մասը բերում են իւրեանց հետ ուխտաւորներն: Իսկ վանքի մէջ հազիւ ծախուում է մի փութ մոմ: Ուխտը վերջանալուց յետոյ մնում է մօտ երկու փութ չլուռած մոմ: Սորա պատճառն այն է որ քահանաներին յանձնած ուխտաւորների մոմերը չեն վառուում պատկերների առաջ մինչև վերջ, այլ պոկուում են և յանձնում մոմովաճառին ծախելու: Ըստորում ուխտաւորների բազմութիւնից մի պոկած մոմի տեղը իսկայն կպչում են երկուսն, երեքը: Երկու

տարի յաջորդաբար եկել է մուտքը ժողովելու կեչառու (Դա-
րաչիչազ) վանհայր Մկրտիչ վարդապետը: Սորա որդին և
քեռ սրբին էին մոմավաճառութեան կապալառուք...:

Սուրբ խաչում եղած նուէրները լինում են դրամ, կանոնց
սկեղէն և արծաթեղէն զարդեր, արծաթէ գօտիներ, խաչեր,
շամբաններ, ձեռագործ օրբիչներ, մետաքսէ բաղմամբիւ թաշ-
կինակներ և այլն: Այդ տեսակ նուէրները ժողովում են խլմ-
բի անդամներն և երեկոյեան յանձնում են վարդապետին:
Վերջին իրեղէնները գրուում էին աճրդի և ծախուում:

Սուրբ խաչ վանքի հետ հաշիւներս վերջացնելով ես շարու-
նակում եմ կրկին իմ ճանապարհս և գնում եմ մօտակոյ
թրքաբնակ Արգեազ գիւղը: Սա հին գիւղերից մինն է և Ստե-
փաննոս եպիսկոպոս Օրբելեանը անուանելով նորան Արկաշ,
պատմում է որ նորա բնակիչներ 735 փրկչական թուականիս,
իւրեանց տանու տէրով հանդերձ դուրս են եկել Մօզ աւանում
նահատակուած Ստեփաննոս եպիսկոպոսի մարմնի յուղարկա-
ւորութեանը մերկայ լինելու: Նոքա խնդրել են հոգեւոր սպա-
սաւորներից հանգստացնել առ ժամանակ նահատակ եպիսկո-
պոսի մարմինը սուրբ Քրիստափոր զօրավարի սենեակում:
Այժմ այդ գիւղը ոչինչ հեռաբերական բան չէ ներկայացնում:
Ինքը դրած է քարակոյտների մէջ մի սարի լանջում, Սուրբ
խաչ վանքից 2—3 վերստ հեռավորութեամբ դէպի հիւսիս:

(Շարունակելի)

ՔԱԶԲԵՐՈՒՆԻԻ

